Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11003/25-ԿՑ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 4

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 7. Կոտայք – ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025-31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.10.2025-31.12.2025թթ. |
| Ներկայացման օր | 16.12.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Հասմիկ Մանուկյան<br>Թիմ լիդեր |

2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բժշկական խորհրդատվություն,
- լվացքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման** շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 48 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է 14 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
- **Կազմակերպվել է շահառուների ժամանցը՝** մանր եւ խոշոր մոտորիկայի, ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, ակտիվացնող պարերի, կապերի ընդլայնման, հյուրերի ընդունելության, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 5 խմբակ՝ հոգեբանական, առողջ ապրելակերպ և առողջական ֆիզկուլտուրա, զարգացնող խաղեր, տիկնիկագործություն, երգի, որին մասնակցել է 40 շահառու:
  Կազմակերպվել է թվով 10 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է 48 շահառու: Իրականացված միջոցառումներն են՝ «Տարեցների միջազգային օր», «Ծառերը կանգնած են մահանում» ներկայացման դիտում, այց Էջմիածնի Մայր տաճար, Սուրբ Հռիփսիմե եւ Սուրբ Գայանե եկեղեցիներ, «Ֆիզիկական ակտիվություն» թեմայով դասընթաց, «Մեծահասակների մեղիագրագիտության զարգացում» թեմայով սեմինար, «Սերունդների հանդիպում» խորագրով միջոցառում, այց Կոտայքի մարզային գրադարան, «Ոսկե աշուն» միջոցառման կազմակերպում, «Նոր տարի» միջացառման կազմակերպում (2 անգամ):
  **Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում** իրականացվել է արվեստի, խաղային, ինտելեկտուալ 34 թերապևտիկ պարապմունքներ, որոնց մասնակցել է 21 շահառու:
- **Սննդի տրամադրման շրջանակներում** յուրաքանչյուր օր կենտրոնում սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:
- **Այլ ծառայություններ**
  **Բուժքույրական ծառայությունների** շրջանակներում 39 շահառուի տրամադրվել է խորհրդատվություն:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

Միջոցառումներ (տե՛ս հետևյալ հղմամբ)
https://surl.li/gatdhl,
https://surl.li/onyxsi,
https://surl.li/ppykub,
https://surl.li/zjjimi,
https://surl.lu/rjfjow,
https://surl.li/unlewi
Թերապիաներ (տե՛ս հետևյալ հղմամբ)
https://surl.li/vmzdsh
Հյուրերի ընդունելություն (տե՛ս հետևյալ հղմամբ)
https://surl.lu/obmtzx

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- լվացքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Ծրագրի նպատակին հասնելու համար աշխատակազմի հմտությունները զարգացնելու, աշխատանքները արդյունավետ կազմակերպելու նպատակով ցերեկային կենտրոնի պատասխանատուի կողմից կազմակերպվել են թիմային քննարկումներ և դեպքերի ուսումնասիրություններ:
Կենտրոնի աշխատակիցները մասնակցել են PUM կազմակերպության միջազգային փորձագետի կողմից «Հիշողության խնդիրներ ունեցող տարեցների հետ աշխատանքի առանձնահատկությունները: Նորարարական մոտոցումները տարեցների եւ հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատանքում, ակտիվ ծերացում» թեմայով երկօրյա դասընթացին:
Կենտրոնի պատասխանատուն եւ հոգեբանը հաջողությամբ ավարտել են «LHS – ARISE առողջապահական համակարգերի ուսուցում՝ առողջ ծերացումը խթանելու համար» մասսայական բաց առցանց դասընթացը:
Կենտրոնի պատասխանատուն մասնակցել է Հրազդանի համայնքապետարանում խնամակալության եւ հոգաբարձության 8 նիստի, ՄՍԾՏկ-ում Կարմիր Խաչ կազմակերպության կողմից կազմակերպված առկա ծրագրերի վերաբերյալ իրազեկող հանդիպմանը, Հրազդանի համայնքապետարանում Կանանց ռեսուրս կենտրոնի կողմից կազմակերպված բռնության վերաբերյալ իրազեկող հանդիպմանը, Կանանց ռեսուրս կենտրոնում կազմակերպված «Հայաստան-Եվրոպական միություն՝ համապարփակ եւ ընդլայնված գործընկերային համաձայնագիր, մշտադիտարկում, ջատագովություն, հաղորդակցում»

հանդիպմանը, Կոտայքի մարզպետարանում «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կողմից կազմակերպված «Քաղաքացիություն չունեցող անձիք» խորագրով հանդիպմանը:
Կենտրոնի պատասխանատուն առցանց մասնակցել է Բիշքեքում տեղի ունեցած միջազգային կոնֆերանսին եւ ներկայացրել կազմակերպության գործունեությունը միջազգային հարթակում:

Ձևաչափ

# ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 48/48 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 22 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 3 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 2 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 3 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 45 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | - |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 43 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 21 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 40 |
| 5.1 | Առողջ ապրելակերպ և առողջական ֆիզկուլտուրա | 32 |
| 5.2 | Զարգացնող խաղեր | 15 |
| 5.3 | Տիկնիկագործություն | 12 |
| 5.4 | Հոգեբանական խմբակ | 15 |
| 5.5 | Երգի խմբակ | 15 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 48 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 17 |
| 7. | Այլ ծառայություն(վարսավիրական,մատնահարդարման,դիմահարդարման)<br>Բուժքույրական խորհրդատվություն | 0<br>39 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «16» 12. 2025թ.

(ստորագրություն, անուն,ազգանուն)